# American Express Cashback քարտերի արշավի մասնակցության պայմաններ

## 1. Ներածություն

1.1 «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից թողարկված American Express Cashback քարտերի (այսուհետ՝ Քարտ) քարտատերերի (այսուհետ՝ Քարտատեր) համար Կազմակերպչի կողմից իրականացվում է American Express Cashback քարտերի արշավ (այսուհետ՝ Արշավ):

1.2 Մասնակցելով Արշավին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

1.3 Սույն Պայմաններին և Դրույթներին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

## 2. Ընդհանուր դրույթներ

2.1 Արշավի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է www.acba.am կայքում:

2.2 Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն Պայմաններում և Դրույթներում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի Արշավի 2.1. կետում նշված կայքերում:

2.3 Արշավի իրականացման ժամանակահատված է համարվում՝ ս.թ. նոյեմբերի 3-ից մինչև նոյեմբերի 30-ը ներառյալ:

## 3. Մասնակցության պայմաններ

3.1 Արշավի շրջանակում Քարտով ԱԿԳ և ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԱՍԿ-ների դեղատների ցանցում վճարային գործառնություններ (այսուհետ՝ Գործառնություն) կատարած Քարտատերերին կտրամադրվի 20 տոկոսի չափով (առանց հարկերի) լրացուցիչ cashback գումար (այսուհետ՝ Cashback), սակայն ընդամենը ոչ ավելի քան 5 000 ՀՀ դրամ:

3.2 Cashback տրամադրելու պահին անհրաժեշտ պայման է, որպեսզի Քարտատերը Բանկում ունենա գործող Քարտ:

3.3 Cashback-ը կտրամադրվի մինչև 2027թ. մարտի 17-ը (ներառյալ):

3.5 Արշավի շրջանակում յուրաքանչյուր հաճախորդին կտրամադրվի սահմանված առավելագույնը մեկ Cashback ՝ անկախ Քարտերի քանակից:

3.6 Գործառնությունների հաշվարկը կատարելու համար հիմք է ընդունվում Գործառնության կատարման ամսաթիվը:

3.7 Կից և/կամ լրացուցիչ Քարտերով կատարված վճարային գործառնությունները դիտարկել որպես Գործառնություն: Ընդ որում՝ կից Քարտերի Քարտատերերը չեն կարող մասնակցել հիմնական Քարտից անկախ:

3.8 Cashback-ը ենթակա չէ փոխարինման այլ ծառայության կամ կանխիկ գումարի հետ:

3.9 Բանկի կողմից զեղծարար և/կամ առերևույթ կեղծ և/կամ հաճախորդի գործարար բնութագրին չհամապատասխանող և/կամ տնտեսական նպատակը չհիմնավորվող գործարքների վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու պարագայում Քարտատիրոջ մասնակցությունը կարող է անվավեր ճանաչվել:

3.10 Վերոնշյալ չափանիշները սահմանվում և որոշվում են բանկի կողմից:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել www.acba.am կայք կամ զանգահարել 010-31-88-88 հեռախոսահամարով:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: